*բոլոր այն վիմագրերը, հիշատակագրերը, որոնք կարևոր արժեք են ներկայացնում ռուսահայ գաղթօջախների պատմության համար:*

## ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

*Գտնվում է Մակեևի փողոցի վրա (N. 13), Վագանկովյան գերեզմանոցի դիմաց, հայոց հանգստարանի տարածքում: Գործող չ. աթոռանիստն է ռուսահայոց թեմի: Կառուցվել է 1815 թ. Լազարյան եղբայրների ծախսով (ճարտարապետ՝ Մ. Ֆելտեն): Հատակին եղել են Լազարյան ազգատոհմի հանգուցյալների տապանաքարերը, որոնց մեծագույն մասը բարբարոսաբար ոչնչացվել է 2-րդ Համաշխարհային պատերազմի տարիներին: Ներկայումս եկեղեցու հատակը ծածկված է ցեմենտ-բետոնի հաստ շերտով: Ընդառաջելով մեր խնդրանքին՝ ռուսահայոց թեմի առաջնորդ Տիրան վարդապետ Կյուրեղյանը (այժմ՝ արքեպիսկոպոս) թույլ տվեց ուղեգորգերը հանել և մեկ անգամ ևս ուշադիր զննել եկեղեցու գետնամասը. հյուսիսային խորանի դիմաց հայտնաբերվեց դեղնավուն կրաքարից կերված ընդամենը մեկ տապանաքար, (1,55x1 մ), որի տառերի ակոսիկները լցված էին հողախառն մոմի պիրկ ձուլվածքով:*

*Արձանագրությունը մաքրելուց հետո ընթերցվեց.*

1. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՎԵՀԱԶՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ/ ԾՆԵԱԼ Ի 16 ԱՊՐԻԼԻ 1774 ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Ի ՔՐԻՍՏՈՍ 26 ՄԱՅԻՍԻ 1846 ԱՄԻ:

*2. Ապա՝ ռուսերեն 3 տող.*

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ ВОЯРИНА/ ИВАНА ИВАНОВИЧА АРАПЕТОВА./ РОДИЛСЯ 16 АПРѢЛЯ 1774 ГОДА, СКОНЧАЛСЯ 26 МАЯ 1846 ГОДА.

ԾԱՆՈԹ. *Հայրապետյանները ծագումով Դիզակի Մելիք-Եգանյանների տոհմից էին: Մելիք-Ավանի մահվանից հետո նրա կին Գոհար արկինը տեղափոխվում է Ռուսաստան: Մելիք-Ավանի և նրա եղբոր ժառանգներից «առաջ եկան իշխան Ամրաայանները, իշխան Մելիքովները և Հայրապետյանները, որոնք ... Աստրախանում, Ս.Պետերբուրգում և Մոսկվայում նշանավոր պաշտոնների մեջ մտան»,- գրում է Րաֆֆին (Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964 , էջ 191): Հայրապետյանների մտերիմ բարեկամն էր ռուս ականավոր գրող Ի. Ս. Տուրգենևը (տես* Братская помощь пострадавшим в Турции армянам, изд. 2-е, М., 1898, с. 334).

*3. Հուշատախտակ պղնձյա թիթեղից: Այժմ ագուցված է եկեղեցու ներսում, աջակողմյան պատին: Վրան հայերեն և ռուսերեն փորագրված է.*






ԿԱՌՈՒՑԱՒ ՏԱՃԱՐՍ ՅԱՆՈՒՆ ՅԱՐՈՒԹԵ[Ա]Ն ՔՍԻ ԾԱԽԻՒՔ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԱՐ[Ա]ՆՑ/ԵՐԿՈՒՑ ԵՂԲԱՐՑ ՄԻՆԱՍԱՅ ԵՒ ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ Ի ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ/ՅԻՇԱՏԱԿ ԻՆՔԵԱՆՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՆԱԿՑԱՑ ԻՒՐԵԱՆՑ/ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1815 ԵՒ'Ի ՅՈՒՆԻՍԻ 1 Ի ՄՕՍԿՈՎ ՆԱԽԱԳԱՀ/ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ:

*Ապա՝ ռուսերեն 6 տող.*

ХРАМЪ СЕЙ СООРУЖЕНЪ ВО ИМЯ ВОСКРЕСЕНІЯ ХРИС/ТОВА ИЖДИВЕНІЕМЪ БЛАГОЧЕСТИВЫХЪ МУЖЕЙ/ ДВУХ ВРАТЬЕВЪ: МИНЫ И ЯКИМА ЛАЗАРЕВИЧЕВЪ/ ЛАЗАРЕВЫХЪ ВЪ ВѢЧНУЮ ПАМЯТЬ



ԳՐԱԴԱՐԱՆ

ИХЪ ВСѢХЪ/ КРОВНЫХЪ СВОИХЪ ВЪ ЛѢТО ГОСПОДНЕ 1815-ГО ИЮНЯ/ 1-ГО ДНЯ ВЪ ПЕРВОПРЕСТОЛЬНОЙ СТОЛѢЦѢ МОСКВѢ.[1]

Լուսանկ. 1

4. Եկեղեցու թմբուկի վրա, *ներքուստ, շրջանաձև.*

ԵԿԱՑՔ ԱՌ ԻՍ ԱՄ[ԵՆԱՑՆ] ՎԱՍՏԱԿԵԱԼՔ ԵՒ ԲԵՌՆԱՒՈՐՔ ԵՒ ԵՍ ՀԱՆԳՈՒՑԻՑ ՋՁԵԶ:

## ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

5. Դամբարան-կոթող, *դորշավուն ավազաքարից, քառակող, ըրդաձև: Միջնամասում քանդակված են թևավոր հրեշտակներ, արևելյան կողին՝ սափոր ծաղկեփնջով: Հարավային կողին ռոմբաձև քանդակ է, որի մեջ եղած սալաքարը պահպանված չէ: Պատվանդանի արևմտյան մասում կերտված է ռուսական զարդերով խորանիկ: Հյուսիսային սալաքարին՝ 15 տող.*

ՅԺՔ/ ՍՈՑՆ ԴԱՄԲԱ/ՐԱՆ ՂԵԹԵՒԱՆ ԿՈ/ՉԻ
ԱԶՆՒԻ Թ[Ո]/ՌԱՆ/ ԻՎԱՆԻՉԻ
ԲԱԺԱԿՆ ԷԱՌ/ ՄԱՆԿԱԿԱՆԻ,
ԱՄՕՔ ԵՐԷՔ ԸՆԴ/ ԵՐԵՍՆԻ.
ՍԱ Ի ԹԻՓԼԻԶ ՔԱՂԱՔ/ ԾՆԱՆԻ,
Ի ՆԱՀԱՆԳԻՍ ԳԱՑ ԺԱ/ՄԱՆԻ
ՎԱՃԱՌԱԿԱՆ ԸՍՏ ԿԱՆՈՆԻ./
ԵԿԱՑ ՎԱՐՈՒՔ ԱՌԱՔԻՆԻ,
ՈՐԲՈՑ, ՏՆԱՆԿԱՑ ՕԳՆԻԶ ԳՏԱՆԻ
ՄԻՆՉ ՑՍԱՀՄԱՆ ՏԻՐԱԿԱՆԻ.
ԵԹՈՂ ՋԱՄ...ՋԿՆԻ
ԳՆԱՑ Ի ՏՈՒՆՆ/ ՑԱՒԻՏԵՆԻ,
ԱՐԴ ՀԱՆԴԻՊՈՂՔ Ի ՍՈՑՆ ՇԻՐՄԻ՝/
ՄԵԿ ՀԱՅՐ ՄԵՐԻԻ/ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ:
1814 ԱՄԻ ՄԱՅԻՍԻ 1/ՄՕՍԿ/ՎԱ:

Ծանոթ. *Արձանագրությունը վկայում է, որ հանգուցյալը Իվան Իվանիչ (Հովհաննես Հայրապետյանց «վեհաղնի» թոռն է: Ցավոք, ընագրի հատկապես միջնամասը քայքայված է, թեև անխաթար է բովանդակությունը:*

6. Տապանաքար, *կարմիր գրանիտից, դագաղաձև: Հյուսիսային կողին՝ 3 տող.*

ԱՅՍ ՏԱՊԱՆԱԿԻ ՄԷՋ ԱՄՓՈՓՎԱԾ Է ՄԱՐՄԻՆԸ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՍԵՑԻ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՄԱՀՏԻՍԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ/ ԽԱԼԱԹԵԱՆՑ, ՈՐ ԾՆԱՒ 1824 ԹՈՒԱԿԱՆԻՆ 25 ՕԳՈՍՏՈՍԻՆ/ ԵՒ ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ 1866 ԹՈՒԱԿ. 1 ՍԵՊՏ.

*Արևելյան կողին՝ 8 տող.*

ԹԷ ԲԱՐԵԿԱՄՔ, ՁԵԶ ՊԱՏԱՀԻ
ԱՅՑԵԼ ԱՆԵԼ ԳԵՐԵԶՄԱՆԻՍ,
ՅԻՇԵՑԷՔ ԴՈՒՔ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ

ԱՆՀԱՒԱՍԱՐ ԿԵԱՆՔ - ԿԵԱՆՔ ԱՆԲԱՂԴԻՍ:
ՄԱՀ ԵՒ ԿՈՐՈՒՍՏ ՄԵԶ ՍԵՊՀԱԿԱՆ,
ՍԱՀՄԱՆ ՄԱՐԴՈՑ Է ՄԵՌԱՆԵԼ,
ՍԱԿԱՅՆ Ի ՄԷՋ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ
ՔԱՆ ԱՄԵՆ ՄԱՀ Է ԱԽԱՒԵԼ:

---

[1] А. Базиянц, Р. Мартиросян, Обелиск, Ереван, 1993, с. 33.